

կամ Հայֆան մէկ քաղաք կը նկատեն, ըսելով թէ Սիգամինոս անուն ստացաւ «Հայֆայէն Կարմեղոս լեռան պատճառաւ»: Հայֆա անունը տրուեցաւ քաղաքին՝ վասնզի Կարմեղոսը անոր կը ծառայէր իբր ապաստան. եբրայեցերէն Գաֆան, կամ վասնզի հըրուանդանը կը կազմէ իր նաւահանգիստը, եբրայեցերէն Հօֆ: Ինչ որ ալ ըլլայ, Սիգամինոս և Հայֆա երկու տարբեր քաղաքներ էին: Պորտոյի ուխտաւորը Պրտզոմայիսէն գալով՝ Գալամոն քաղաքը հանդիպեցաւ 12 հռոմէական մզոն հեռու դէպի հարաւ: Արդ այս հեռաւորութենէն արդի քաղաքէն մէկուկէս քիլոմէր անդին կար Յունօ - Հռոմէական քաղաք մը, ինչպէս ցոյց կուտան այս տեղւոյն վրայ կատարուած պեղումները: Ծովեզերքը տակաւին կը տեսնուին Պորճեզ - Չառախ կոչուած հին բերդի մը մնացորդները. այս քաղաքին տեղը բնիկները Հայֆա կը աքիֆա (հին Հայֆա) անունը կուտան:

Բաց աստի, Գալամոնէն երեք մզոն հեռու, Կուուացի ուխտաւորը հանդիպեցաւ Սիգամինոս: Հայֆա էլ Աթիքայէն ճշդիւ չորս քմ. և նոյն խակ քիչ մը աւելի հեռու, եթէ Ռաս կը Քերունի (Այդիներու գլուխ) կողմէ ծովին երկարութեան ճամբորդութիւն կատարուի՝ կը հասնինք Թիչ կս Սեմաֆ (բլուր ձկան) ուր գրտնուած են դրամներ, խոյակներ և հռոմէական ու բիւզանդական շրջաններու ընդարձակ շինութիւններ: Հոս է ուրեմն Գալամոնի մրցակիցին տեղը: Բլէզանսի ուխտաւորը (570) Սիգամինոսի մասին կուտայ բաւական հետաքրքրական մանրամասնութիւններ: Անոր պատմութեան համաձայն՝ որուն մէջ հեռաւորութեանց թիւերը յաճախ յայտնօրէն ընդօրինակողներէն փոփոխուած են, Սիգամինոսը կը գտնուի «Կարմեղոս